Ս․ Փրկչի վանաց՝ եւ զդուռն եկեղեցւոյն․ և 'ի գիշերին յայնմիկ՝ յետ դատարկելոյ զկարասիս վանաց, կողոպտեցին նաեւ զեկեղեցին․ յափշտակեալ զեկեղեցական սպասս, և ոչ թողին անդ և ոչ մի ինչ։ Լուեալ Գրիգորի Պատրիարքի, չոքաւ անդ և ետես զեղեալսն․ եկն և դատաւոր քաղաքին և ետես զայրեալ դրունսն․ զի ելանէր տակաւին ծուխ 'ի խանձողաց, եւ զվանքն մերկացեալ․ եհարց զԳրիգոր և ասէ՝ ունի՞ս յայտնի թշնամի զոք․ և կամ յո՞յր վերայ հաստատեալ ես զկարծիս քո․ և նա ասէ՝ թշնամացեալ են ինձ Շէյխ Սալէհ Տէճէնի եւ Շէյխ Թաճ էտտին՝ բնակիչք Սիոնի․ յաղագս պարտուց, որոց վճարումն եղեւ ըստ մտաց արքունի հրովարտակին։ Սակայն դատաւորն չկարացեալ ասել եւ կամ առնել ինչ, դարձաւ 'ի տեղի իւր․ միայն զեղեալսն հարեալ 'ի գրի, ետ 'ի ձեռս Գրիգորի․ 'ի ٢٣ Րէպիւլէվվէլ ամսոյ՝ ١٠٢٣ (1613)։ Իսկ Շէյխ Սալէհ չառեալ յագուրդ յաւարէ եկեղեցւոյն, ձեռն արկ յայլ ևս գործ վնասակար ընդդէմ քրիստոնէից։ Զի նախնիք սորա ընկալեալ էին զվերակացութիւն կալուածոց Սիւլէյմանայ արքայի, վարել զայն յորդւոց յորդի։ Սա գնացեալ առ դատաւորն ամբաստան եղեւ զքրիստոնէից․ և խնդրէր կոչել յատեան զԱստուածատուր վարդապետ զվերատեսուչ վանաց Ս․ Փրկչի․ զփոխանորդս Լատինաց՝ Յունաց՝ Գպթոց և Ասորւոց․ ապա ասէ, բովանդակ արտն և պարտէզքն՝ արտաքոյ պարսպի քաղաքին 'ի շրջապատս Սիոնի․ յարակից շիրմի Մարգարէին Դաւթի․ և այլ կալուածք՝ աւանդեալ են Շէյխ Ահմէտ Տէճէնեայ յարքայէն Սիւլէյմանայ․ մին 'ի բազմաց անտի՝ է արտն՝ յոր թաղեն քրիստոնեայք զմեռեալս իւրեանց, ահաւասիկ սահմանք նորին․ 'ի հարաւոյ՝ այգի Գասսարայ․ յարեւելից՝ այգի Սալէհին մինչ յորմն Ս․ Փրկչի․ 'ի հիւսիսոյ Ձիթենեաց պարտէզն Հայոց, յարեւմտից՝ պարտէզն՝ ուր է գերեզմանն Բաղոսի․ մինչ 'ի բլուրն՝ որ հայի 'ի վերայ աւազանին Սուլթանին․ (զայս պարտէզ գնեաց Յակոբ Չէլէպի Թարգմանն Հայոց, եւ խառնեաց 'ի գերեզմանատունն)․ տես 'ի դատաստանական գիրս, ١٠٦٧ (1656)։ Ապա մատոյց զգիր դատաւորին, զոր առեալ էին 'ի ժամանել Արքունի հրովարտակին․ յորում հրամայէր քըն-